

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 փետրվարի 2011 թվականի N 193-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԵՏ ՇՓՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՒՄՔԻ, ԿԵՐԵՐԻ, ԼՐԱՑԱԿԵՐԵՐԻ, ԿԵՐԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ, ԲՈՒՅՍԵՐԻ, ԲՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սահմանային հսկիչ կետի տեսուչի և սերտիֆիկացման մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, ինչպես նաև կենդանական ծագում ունեցող հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների և կերային հավելումների, բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների մասին տեղեկատվության տրամադրման էլեկտրոնային ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացման մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող՝ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, ինչպես նաև կենդանական ծագում ունեցող հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների և կերային հավելումների, բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների մասին տեղեկատվության տրամադրման էլեկտրոնային ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման N 1 հավելվածի 1-8-րդ սյունակները լրացվում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սահմանային հսկիչ կետի տեսուչի, իսկ 9-11-րդ սյունակները՝ սերտիֆիկացման մարմինների կողմից.

2) սույն որոշման N 2 հավելվածը լրացվում է Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացման մարմինների կողմից.

3) սերտիֆիկացման մարմինները յուրաքանչյուր շաբաթ, երեքշաբթի օրը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության

նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը էլեկտրոնային եղանակով տրամադրում են Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող՝ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանական ծագում ունեցող հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների և կերային հավելումների, բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների մասին տեղեկատվություն՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2011 թ. մարտի 9  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
փետրվարի 3-ի N 193-Ն որոշման

Ձև

**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

(պարտադիր հավաստում իրականացնող մարմնի անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեն)

(տեղեկատվությունն ստացող մարմնի անվանումը, գործունեության վայրը)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Արտա- դրան քի	Արտա- դրան քի	Արտա- դրանքի քանակ ու-	Արտա- դրանքն արտա- դրողը(անվ	Ներմո ւ-ծողը (անվ ա-	Արտա դրան քի	Ապրանքաուղեկից փաստաթղթերի՝ անասնաբուժական , առողջության,	Լաբորատոր փորձաքննություն իրականացնող լաբորատորիայի	Արտադրանքի համապատաս- խանության հավաստման	Արտադրան քի համապատ աս-	Համապա -տասխա- նության պարտադ

ԱՏԳ ԱԱ-ի ծածկ ա- գիրը	անվա- նումը, կշռա- փաթե- թավո- րումը	թյունը (կգ, հատ, լիտր, դոզա), նետտո և բրուտո քաշը, խմբաք ա-նակի համար ը	ա-նումը, գտնվելու կամ գործու- նեության վայրը)	նումը)	արտա- դրու- թյան և պիտա- նիու- թյան ժամ- կետ- ները	անվտանգության, բուսասանիտարակ ան, համապատասխան ու-թյան, ՎՎՀԿԿ՝ HACCP կամ ԻՍՕ հավաս-տագրեր, լաբորատոր փորձարկումների արձանագրություն ներ կամ եզրակացություն- ներ, ինվոյս, ապրանքա- տրանսպորտային բեռնագիր տալու ամսաթիվը, համարը	անվանումը, լաբորատոր փորձաքննության տեսակը, լաբորատոր փորձաքննության արձանագրու-թյան համարը(համապա տաս-խանության հավաստագրերի, ՎՎՀԿԿ՝ HACCP կամ ԻՍՕ հավաս- տագրերի, լաբորատոր փորձարկումների արձանագրու- թյունների բացակայության դեպքում)	հայտատուն(անվան ումը կամ ազգանունը, անունը, գտնվելու կամ գործունեու- թյան վայրը ՀՎՀՀ-ն)	խանության հավաստմա ն փաստաթղթ ի անվանումը, համարը, գործողությ ան ժամկետը և տալու ամսաթիվը, պարտադիր հավաստմա ն ենթարկված արտադրան քի խմբաքանա կի համարը	իր հավաստ- ման ձևը (համապ ա- տասխա- նության հայտարա -րագրում կամ սերտիֆի- կացում)

Տեղեկատվությունը  
ներկայացրեց

սահմանային հսկիչ կետի տեսուչ՝ ստորագրությունը,  
ամսաթիվը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն

Տեղեկատվությունը ներկայացնողի  
պաշտոնը, անունը,  
ազգանունը, ստորագրությունը,  
ներկայացնելու ամսաթիվը,  
հեռախոսահամարը, էլեկտրոնային  
հասցեն

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**

Հավելված N 2

**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՏՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

(պարտադիր հավաստում իրականացնող մարմնի անվանումը,  
իրավաբանական և գործունեության հասցեն)

(տեղեկատվությունն ստացող մարմնի անվանումը, գործունեության վայրը)

1	2	3	4	5	6	7	8	9	10
Արտադրանքի ԱՏԳ ԱԱ-ի ծածկա-գիրը	Արտադրանքի անվանումը, կշռափաթեթավորումը	Արտադրանքի քանակությունը (կգ, հատ, լիտր, դոզա), նետոն և բրուտո քաշը, խմբաքանակի համա	Արտադրանքն արտադրողը(անվանումը, գտնվելու կամ գործունեության վայրը)	Արտադրանքի արտադրության և պիտանիության համապատասխանության ժամկետները	Ապրանքաուղեկից փաստաթղթերի՝ անասնաբուժական, առողջության, անվտանգության, բուսասանիտարա-կան, համապատասխանության, ՎՎՀԿԿ՝ HACCP կամ ԻՍՕ հավաստագրեր, լաբորատորփորձարկումների արձանագրություններ կամ եզրակացություններ, ինվոյս, ապրանքա-	Լաբորատոր փորձաքննություն իրականացնող լաբորատորիայի անվանումը, լաբորատոր փորձաքննության տեսակը, լաբորատոր փորձաքննության արձանագրության համարը >(համապատասխանության հավաստագրերի, ՎՎՀԿԿ՝ HACCP կամ ԻՍՕ հավաստագրերի, լաբորատորփորձարկումների	Արտադրանքի համապատասխանության հավաստման հայտատուն (անվանումը կամ ազգանունը, անունը, գտնվելու կամ գործունեության վայրը ՀՎՀՀ-ն)	Արտադրանքի համապատասխանության հավաստման փաստաթղթի անվանումը, համարը, գործողության ժամկետը և տալու ամսաթիվը, պարտադիր հավաստման ենթարկված արտադրանքի խմբաքանակի համարը	Համապատասխանության պարտադիր հավաստման ձևը(համապատասխանության հայտարարագրում կամ սերտիֆիկացում)

		րը			տրանսպոր- տային բեռնագիր տալու ամսաթիվը, համարը	արձանագրու- թյունների բացակայության դեպքում)			

Տեղեկատվությունը ներկայացրեց

\_\_\_\_\_ (պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը, ներկայացնելու  
ամսաթիվը,

հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**